600.0348.09.08.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

9 օգոստոսի 2017 թվականի №348Ա
ք.Երևան

«ՖԵՐԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ԳՆԴԵՎԱՆՔ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 23-րդ, 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը և հաշվի առնելով «ՖԵՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի հուլիսի 28-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում** է.

1. «ՖԵՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «ԳՆԴԵՎԱՆՔ» փոքր հիդրոէլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական տարածքում՝ Արփա գետի Անկան վտակի վրա (բնական ջրահոսք)) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2032 թվականի օգոստոսի 9-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «ՖԵՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ԳՆԴԵՎԱՆՔ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. «ՖԵՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ)» ենթակետով սահմանված տասնհինգ տարվա ժամկետը «ՖԵՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համար կհաշվարկվի Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի մարտի 2-ի «ԲԻԷՍԲԻ» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության «ԳՆԴԵՎԱՆՔ» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանելու մասին» №40Ա որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ 2016 թվականի ապրիլի 2-ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
9 օգոստոսի 2017թ.
ժամը 16[00]